ԳՈՐԻՍ,- Այսօր ժամը 18:10ին Կապան-Գորիս մայրուղու Շուռնուխ գիւղին յարող տեղամասում երեւացին երեք զրահամեքենաներ եւ մէկ «Ուրալ» մակնիշի աւտոմեքենայ։

Ժամը 19:10 բոպէին, 30-40 հոգիանոց զինուած հրոսակախումբը մտնում է Շուռնուխ։ Գիւղի միլիցիայի տեսուչը ներկայանում է առաջին պատահած զինուորին եւ ցանկանում է իմանալ, թէ ովքե՞ր են եւ ինչ նպատակով են գիւղ եկել։ Աւտոմատաւոր զինուորը սպառնում է կրակել, գոռալով. «Մենք հրաման ենք կատարում, կորէք ձեր տները»։ Տեսուչի վկայութեամբ զինուորները դեսանտայիններ են եղել։ Նրանց կարճ խուզուած գլուխները եւ դէմքին քսուած մուգ կանաչ ներկը խօսում էր այն մասին, որ իրենց բռնազաւթումը իրագործելու ընթացքում նրանք ձեւերի մէջ խտրականութիւն չեն դնում։ Գիւղ մտնելուն պէս զինուորները աւտոմատային կրակահերթեր են թողնում տների վրայ։ Մինչ անակնկալի եկած ՄՕՅՉի մարտիկները որոշում էին թէ ինչ անեն, դեսանտայինները մտնում են գիւղի շտաբ, զինաթափում եւ դէպի աւտոմեքենայ են տանում ՄՕՅՉի 6 մարտիկների։ Ճանապարհին տեղի ունեցած միջադէպից սպանւում է մէկ հայորդի։ Մի քանի տներ աւերելուց եւ թալանելուց յետոյ, դեսանտայինները առանց լուրջ դիմադրութեան հանդիպելու, բարեյաջող աւարտում են իրենց գործողութիւնները եւ հարուստ աւարով վերադառնում ետ. մէկ սպանուած, ութ պատանդ, չորս վիրաւոր եւ բազմաթիւ այրուած տներ։ Դժուար է նկարագրել շուռնուխցիների վիճակը, որոնք մեծամասնութեամբ Բաքուի սպանդից փախած հայեր են։ Ցնցած գիւղում այժմ յարաբերական խաղաղութիւն է, գիւղի բնակչութիւնը խուճապի մէջ է։

ԿՈՐՈԲՑՈՎԸ ԱՆՁԱՄԲ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՈՃԻՐՆԵՐԻՆ

Շահումեան, 7 Մայիսի, Մ.Տ.Կ.,- Առաւօտեան Շահումեանից Ի. Մուրադեանը հաղորդել է, որ ջարդերն ու զանգուածային սպանութիւններն իրականացնում են ԽՍՀՄ ներքին զօրքերը. յատկապէս «աչքի է ընկնում» մայոր Կորոբցովը, որն անձամբ գնդակահարում էր մարդկանց, ստիպում տղամարդկանց սողալ, հրամայում էր սպանել վիրաւորներին։ Լկտիաբար ծաղր ու ծանակի էր ենթարկում Համաշխարհային Երկրորդ Պատերազմին մասնակից Աշոտ Քալանթարեանին, որն ունի կառավարական 16 պարգեւ ու շքանշան, ասելով, որ կը հանի այդ նշանները, եւ ձուլուածքը կը լցնի նրա կոկորդը։

Թէ՛ Կորոբցովը, թէ՛ զինուորական միւս ղեկավարները իրենց գործողութիւնները համաձայնեցնում էին ռադիոյով - հրասայլերից ու զրահամեքենաներից -, լաւ լսելի է ինչ որ մէկի - հաստատ Շատալինի - ձայնը, որը պատժիչ գործողութիւնների հրահանգներ էր տալիս։

3 օրուայ ընթացքում Գետաշէնից հանել են մօտաւորապէս 1500 մարդ եւ ուղարկել Ստեփանակերտ։ Մնացել են միայն 900 բնակիչ, հիմնականում մինչեւ 50 տարեկան տղամարդիկ։ Յայտնենք, որ նախապէս ստացուած այն լուրը, թէ 550 մարդ է մնացել գիւղում, չի համապատասխանում իրականութեանը։ Անցագրային կարգի ստուգումն ուղեկցւում է ծեծով ու անարգանքով։ Հաւանաբար ՆԳ զօրքերին ու ՕՄՕՆականներին յատուկ հրահանգ է տրուել՝ ամէն կերպ մեկուսացնել լրագրողներին։ Այսպէս, հեռուստալրագրող Վարդան Յովհաննիսեանին բռնել են, գազանաբար ծեծել, ջարդել նկարահանող խցիկը, տեսաժապաւէնը փչացրել եւ իրեն յանձնել ՕՄՕՆականներին։ Այլ տեղեկութիւններ նրա մասին չկան։